ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 81

«10» 11 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Արիստակեսի Նազարեթյանին ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետի պաշտոնում նշանակելու մասին ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի 08.11.2021թ. N 11/187-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասին 7-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հ ր ա մ ա ն ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 18.12.2019թ.՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար փորձագիտական հանձնաժողով ստեղծելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 28-ի N 62 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 71 հրամանի 1-ին կետում՝

«**Խալաթյան Նաիրա** - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«**Նազարեթյան Արմինե** - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ